ՋԱՎԱԽՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է «Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼՅԱՆԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ»ԿՈՄԻՏԵ

Ջավախքի հայ հասարակությունը մեծ ցավով եւ լուրջ անհանգստությամբ ընդունել է ՀՀ ԱԱԾ-ի կողմից Արցախյան պատերազմի հերոս Մարտական խաչ շքանշանի առաջին կարգի ասպետ Ժիրայր Սեֆիլյանի եւ նրա մարտական ընկեր ու գաղափարակից Վարդան Մալխասյանի ցուցադրական ձերբակալությունը: Չկամենալով հետ մնալ Հայաստանում եւ աշխարհի հայաշատ վայրերում ի պաշտպանություն Ժիրայր Սեֆիլյանի ընթացող պայքարից ս. թ. դեկտեմբերի 21-ին Ախալքալաքում կայացել է «Ի պաշտպանություն Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի» հասարակական նախաձեռնությամբ ձեւավորված կոմիտեի առաջին նիստը:

Քաղբանտարկյալների պաշտպանության համար ձեռնարկվող քայլերին ծանոթանալուց հետո ներկաները հանդես եկան հետ–յալ հայտարարությամբ, որը Ջավախք-ինֆո տեղեկատվական գործակալությունն ամբողջությամբ ներկայացնում է ստորեւ.

Արտահայտելով ջավախահայության լուրջ մտահոգությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի նվիրյալ Ժիրայր Սեֆիլյանի եւ նրա զինակից Վարդան Մալխասյանի ձերբակալության կապակցությամբ հասարակական նախաձեռնությամբ ձեւավորված կոմիտեն կոչ է անում ՀՀ իշխանություններին վերանայել Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի նկատմամբ որդեգրված անհամաչափ եւ քաղաքական բացահայտ հալածանքի տպավորություն ստեղծող պատժամիջոցները:

Ընդդիմադիր քաղաքական հայացքներ մարտական ուղղամտությամբ արտահայտող ազատամարտի հերոսների ցուցադրական եւ իրավաբանորեն անհիմն կալանավորումը եւ ՀՀ ԱԱԾ-ի ստալինյան բռնապետության ոճով անհեթեթ քաղաքական զրպարտությունների հրապարակային տարածումը վնասում են Հայաստանի միջազգային վարկանիշին ու Ջավախքի եւ աշխարհասփյուռ հայության Հայոց պետության նկատմամբ տածած վստահությանը:

Այս առումով առանձնակի վրդովմունք է հարուցում ՀՀ ԱԱԾ-ի պաշտոնական հաղորդագրության մեջ եւ, մասնավորապես, Ջավախքի ազգային գործիչների վարկաբեկման մեջ մասնագիտացած Հայոց աշխարհի մի շարք հրապարակումներում Ժիրայր Սեֆիլյանին Լիբանանի քաղաքացի տրված բնութագրումը: Քաղաքական անհեռատեսության պատճառով ՀՀ քաղաքացիության ձեռքբերման համար բազմիցս ապարդյուն դիմած Ժիրայր Սեֆիլյանին օտարերկրյա քաղաքացի լինելու հանգամանքի անբարո կիրառումը նրա հայրենանվեր գործունեությունը սահմանափակելու համար դատապարտելի է եւ անհանդուրժելի:

Նույն տրամաբանությամբ, Հայոց հայրենիքի անբաժանելի մասում սեփական ազգային եւ քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար մաքառող Ջավախքի հայությունը նույնպես պետք է օտարված լինի Հայաստանի հասարակական եւ մշակութային կյանքից «խորթ զավակի» մերժելի կարգավիճակով:

«Ի պաշտպանություն Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի» կոմիտեն դիմում է ՀՀ իշխանություններին ձերբակալված ազգային գործիչներին կալանավայրից ազատելու եւ նրանց նկատմամբ հարուցված քրեական գործերի քննությունը բացառապես իրավական ոլորտ տեղափոխելու հաստատուն պահանջով:

Կոմիտեն խստագույնս դատապարտում է ՀՀ-ում գործող Ազգային միաբանություն կուսակցության առաջնորդ Արտաշես Գեղամյանի պառակտիչ կեցվածքը Ժիրայր

Սեֆիլյանի եւ Վահագն Չախալյանի պաշտպանության տապալման ուղղությամբ եւ վստահություն հայտնում, որ վերջինիս գործունեությունը կարժանանա հայաստանյան հասարակության միահամուռ դատապարտությանը:

Արցախի ազատագրության եւ Հայոց պետության կայացման համար մարտնչած Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի ազատ արձակմամբ ՀՀ իշխանությունները բացառիկ առիթ կունենան վկայելու ժողովրդավարական արժեքներին եւ երկրում իրավական եւ ազատական մթնոլորտի սահմանադրորեն ամրագրված պարտավորություններին հավատարիմ լինելու մասին:

Զավախք-ինֆո 22.12.06թ.